

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆ

Գուկարիոյ համար

Տարեկան ֆրք. 10


Վեցամսեայ " 5

Արտասահման

Տարեկան ֆրք. 12

Վեցամսեայ " 6

ԿԱՆԻՍԻԿ



Գրական և առևտրային

Հարց

DIRAN PAPAZIAN

RUE DRAGOMAN

K. STEPAN

BULGARIE) VARNA

ՇԱՐԱԹԱՅԱՆԴԵՍ. ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ԶԱԻԵՇՏԱԿԱՆ

Եթե կ'ուզե՛ք "Հայեղի" ին մեջ աղոտ երեւնալ,

Պարսիք սիրուն եւ ազնիւ լինե՛ք մեր ազնեւալ:

Կարդալ վերջին երեսի ՕԳՆՈՒ-
ԹԻՆ ՀԱՅ ՈՒՊՈՒԿՆԵՐՈՒՆ ԺԱՆՈՐՈՐԴԱՅԻՆ:

ԱԶԳԱՅԻՆ

ՄՇՈՅ ԼԲՈՒԱԾ ՀԱՐՍԵՐԸ

Ամենայն Հայոց Վեհ. Հայրապետին կողմէ այս անգամ պաշտօնագիր մը ղըր կուած է ի Պատրիարքարան, ի մասին Մուշի Առաջնորդական տեղապահ Տ. Բարգէն Մ. վարդապետի ծանօթ շըրջաբերականին: Ն. Ս. Օծութիւնը սոյն պաշտօնագրով շատ սեղմեալ վերապահումներով միայն պատրաստականութիւն կը յայտնէ կրկնամուսնութեան հրաման տալու այն մանկամարդ կիներուն որոնք լքուած են իրենց այրերուն կողմէ: Վեհ. Հայրապետը կը հրամայէ որ մանրազնին և անաչառ քննութիւն կատարուի, և երբ հաստատուի թէ ամուսինը անդարձ կերպով հեռացած է և իրեն եղած դիմումները անհետեւանք և անպատասխան կը թողու, այդ պարագային մէջ արտօնութիւն տրուի լքուած հարսին՝ պատկուիլ ուրիշի հետ: Իսկ տալէնց կիներուն համար, անոնց մանաւանդ

որոնք զաւակ ունին, այս արտօնութիւնը բացարձակապէս կը զլանայ:

Ս. Հայրապետը գաւառացի հայ ընտանիքներու համար կենսական եղող այս խնդրին վրայ իր պարզած ընդհանուր տեսութեան մէջ, որ անոնց վիճակին գիտակից և հայրական զգացումներ կը պարունակէ, կը շեշտէ սա պարագան թէ Բարգէն վարդապետի նկարագրած ամուսնական լքումներուն հիմնական դարմանը խորհելու է:



— Կիլիկիոյ հանգուցեալ Մկրտիչ Կաթողիկոսին ժառանգորդ Յակոբ և Գրիգոր Գույումճեաններու և Օսմ. Պանքային միջև եղած 500 ոսկիի դատը սկսած է տեսնուիլ Կ. Պոլսոյ վերաքննիչ չառնանի առևտրական ճիւղին առջև: Ահաւասիկ այս դատին առիթ տուող պարագաները:

Հանգուցեալ Կաթողիկոսը իր կենդանութեանը 500 ոսկիի գումար մը ձգած էր Օսմ. Պանքայի Ատանայի մասնաճիւղին քով, զոր տեղւոյն նստարութեան վաւերացուած պաշտօնագրով մը Սոյ վանքին յատկացուցած էր իր ունեցած բոլոր շարժուն ստացուածքներուն հետ: Կաթողիկոսի մահէն ետքը իր ժառանգորդները Ատանայի առևտրական դա-

տարանին գլխիկով՝ վճիռ մը ձեռք բերած էին որ իրենց յատկացնէ այդ 500 ոսկին և կ'որոշէ որ Պանքային մասնաճիւղը՝ այդ գումարը վերոյիշեալ ժառանգորդներուն վճարէ։ Այս վճարին գէտ է ահա որ Պանքան վերաքննութեան դիմած է, և այս վերաքննութեան դատին կը միջամտէ (սախիյի սալա) Ազգ. Պատրիարքարանը՝ Սիսի վանքին իրաւունքները պաշտպանելու համար։ Պատրիարքարանի կողմէ փաստաբան կարգուած է Մկրտիչ Առասեան։

— 1894էն 1898, հինգ տարիներու միջոցին «փոխան ծաղկեպատկի» ի նպաստ Ազգ. Հիւանդանոցի եղած նւիրատուութեանց գումարն է 87,227 դր. միջին հաշով տարին 160 ոսկի։

— Կրօն. ժողովը կարգաւով՝ Ռուսճուք գտնուող Մչեցի երեւում քահանային նա մակը, որով արտօնութիւն կը խնդրէր յառաջիկայ դաշնան երթալ իր ծննդավայրը, անփոփոխ պահեց իր նախորդ օրոշումը, այսինքն եթէ յիշեալ քահանան անմիջապէս չմեկնի իր ծննդավայրը, թոյլ չտրուի իրեն ո՛ր եւ է եկեղեցական պաշտօն վարել։

— Էջմիածնէն կը գրեն թէ, Երեւանի նոր փոխ թեմակալ Պարզեանց Սուքիաս եպիսկոպոս ծանր հիւանդ է այս պահուս. ինֆլուէնձայէ կը տառապի եւ բժիշկները այնչափ յոյս չեն տար։ Էջմիածնի է՛ն հարուստ եպիսկոպոսն է սա. 80,000 ռուպլի ունի պանքան։

— Վառնայի ազգ. երկսեռ վարժարանները որ հիւանդութեանց պատճառաւ արդէն գոցուած էին, վերաբացումնին անպայման կերպով յետաձգուած է։ Հոգաբարձութիւնը Թաղ. խորհրդոյ հետ խորհրդակցելով վարժարանի ծրագիրը կ'ուզէ փոփոխութեան ենթարկել պիտոճէի խիստ զգալի անձկութեան պատճառաւ և զայն յարմարցնել սնտուկին։ Մինչեւ դպրոցներուն բացումը անցնելիք ժամանակամիջոցին մէջ նիւթապէս օգտուելով եւ առաջին եռամսեային մէջ գոյացած պարտքերը հատուցանելու հա-

մար է որ երկսեռ ուսուցչական մարմինը իրենց Տնօրէնովը միասին դադարեցուցած է պաշտօնէ։

— Փիլիպէէն կը գրեն թէ տեղւոյն Թաղ. Խորհուրդը վաւերացուցեր է նորալաւ Որբախնամ ընկերութեան կանոնագիրը։ Կը յուսանք թէ քիչ ատենէն պիտի լսուի այդ բարենպաստ ընկերութեան գործունէութիւնը։ Այս առթիւ կը կրկնենք նաեւ թէ Պուլկարայի ուրիշ քաղաքներու երկտասարդք ալ մասնախումբեր կազմելով մասնակցելու են այդ գթութեան գործին։

Հայրենիքի որբերը մինակ մեր չոր կարեկցութեան արտայայտութիւններովը, ախ ըսելով կամ վախ պոռալներովը չեն սնանիր։ Դրական օգնութիւն պէտք է։

Պուլկարիոյ Երեւմոսքը

Բարիդէն կը հեռագրեն Նայե Շրայե Բրէնէի թէ Պուլկարիոյ դրամական պէտքերը հոգալու մասին կատարուած բանակցութիւնները կը շարունակուին։ Սեղանաւորական ակումբներու մէջ Պուլկարիոյ երմոական կացութեան մասին բարւոքում մը կարելի կը նկատուի կարճ պայմանաժամով գանձային տոմսերու շրջաբերութեան հանուելովը։ Այդ գործողութիւնը եթէ կատարուի, 20-30 միլիոն ֆր. գանձային տոմսեր շրջաբերութեան պիտի հանուին, հինգ առ հարիւր տոկոսով։ Այդ տոմսերը չափաւոր գինով պիտի տրուին հասարակութեան։

— Վիեննայէն ալ կը հեռագրեն թէ տեղւոյն սեղանաւորներուն և Պուլկարիոյ վարժարաններէն միջեւ բանակցութեան սկսուած է 30 միլ. Փր. փոխառութեան մը կնքմանը համար։

ՈՍԿԻ ԱՂԲԻՐՆԵՐ

ՊԱԳՈՒԻ

«Երբ Թիֆլիզէն մեկնեցայ Պաքու երթալու համար, հետաքրքրութիւնս կը սաստկանար վայրկեան մը առաջ տես-

նելու այդ քաղաքի ոսկիի աղբիւրները, որոնք իրենց վրայ գրաւած են արդէն աշխարհի ուշադրութիւնը: Առաջին անգամ Պաքուի տեսնելու, ճնշիչ օդի մը տպաւորութիւնը թողոյց վրաս, մարդս պէտք է յարմարի այդ զգուելի օդին: Նոգեկոտքը քաղքին մօտեցած ատեն կը տեսնես լերի, անգոյն ու տափարակ լեռներ: Բուսականութիւնը մեռած է հոն: Բնութեան կենդանութիւն չի կայ: Կայարան իջնելուդ պէս, մեքենաներու ու գործարաններու սուր ձայնը և հոտը անմիջապէս ուղեղդ կը խանգարեն, և կը կարծես թէ բոլորովին տարբեր աշխարհ մը մտած ես: Մէկ երկու օր ետքը գացի սե քաղաք, որ սարսափելի է իր ծանր և խեղդիչ օդովը. գարշելի հոտ մը կը բուրէ. զարմանալին սա է որ այս ծանր տպաւորութիւնը շուտ մը կանցնի և շաբաթ մը մնալով այդ նաւթի քաղաքը կը վարժուիս անոր օդին: Հոս ինչ կերպ և որքան ծանրագին ու մաքուր հազուստ որ հագնիս, օր մը կը տեսնեմ երկրորդ օրը դուռն ալ հաւասար ես այն կեղտոտ բաներին որ մինչև իր ոսկորներուն ծուծը թաթխուած է նաւթի մէջ: Քանի մը օր վերջը գացի Բալախանի, (Պաքուի նաւթահորերու շարունակը) ահա կը տեսնեմ նաւթահորերու աշտարակաձև փայտէ շէնքեր, որոնց ամեն մէկին բարձրութիւնն է 130-150 մէթր, իր տրամագծով: Արեւիկա հաստատուած է նաւթահորի վրայ, ուսկից 1800 կանգուն խորութենէն դուրս կը պոռթկայ շատրուանի նման նաւթ իր 10-12 տեսակ օգտակար նիւթերով: Շատրուանը այնքան սարսափելի ու ժգնութեամբ կը զարնէ փայտէ աշտարակին ծայրը հաստատուած մէկ կանգուն թանձրութեամբ երկաթէ տախտակին որ զայն 2 ժամուան մէջ կը ծակէ, հետեւաբար 2 ժամը անգամ մը փոխելու է այդ տախտակը, որպէս զի շատրուանը աշտարակը չի քանթէ: Այդ շատրուանը շատ անգամ այնպիսի ուժգնութեամբ քարեր կը զարնէ այդ երկաթէ տախտակին որ կայծեր կարճակէ և կրակ կառնէ: Այսպէս վաղած շատրուան մը 24 ժամուան մէջ իր տիրոջը կուտայ հարիւր հազար ռուբլի:

Պաքուի ոսկւոյ դէզերուն տիրանալու համար ոչ մեքենագիտութիւն, ոչ ճարտարութեամբութիւն և ոչ բանոր մը չակներու աշխատանք պէտք չէ. այլ կոյր խլուրդ ըլլալ, թաղուիլ երկրի ստոր-երկրեայ ցանցերուն մէջ, ուր անմատչելի է լոյսը, եւ ուր՝ յիմար բաղդը դէմ առ դէմ եկած կոյր խլուրդին հետ, քիչ մը իբար կը կրծեն և ահա այդ շփումէն դուրս կը ժայթքի ոսկիի շատրուանը:

ՀԱՄԲՈՐԴ

ՏԳԵՂ ԲԱՐՔԵՐ

ԽՕՍԲ—ՄԷԿ

(ԵՐԿՂԱՅՐԿԵՆԱՎԷՊ)

Օրիորդ Մ... և միսիւ Գ... սաստիկ սիրահարուած՝ կ'ուզէին ամուսնանալ: Երկուքն ալ իրարու շատ յարմար էին: Բայց օրիորդին հայրն ու մայրը որ բարեհամբաւ և բաւական ալ հարուստ էին, այս ամուսնութեան կը հակառակէին. ասոր համար ագգականք ու բարեկամք կը մեղադրէին զիրենք: Օր մը երկու սիրահարները աներեւութացան: Տարածայնուեցաւ թէ Բուխարա անցեր են և օրիորդին տունէն ալ բաւական ծանրագին բաներ հետերնին տարած են: Հայր և մայր ըստ սովորութեան սկստն լալ, ողբալ ու անիծելով զանոնք «երեսնին չի տեսնանք» պոռալ: Բարեկամները սկսան արգահատիլ անոնց վրայ:

Երկու շաբաթ վերջը ամուք սիրային վերադառնալով մտերիմ բարեկամի մը տունը իջեանեցան: Ամուսնացած էին: Ամիս մը ետքը հայր և մայր բարեկամներու բարեխօսութեամբը իրենց աղջկան ու փեսին հետ հաշտուած, զանոնք տուներնին առած՝ սեղան կը նստէին: Հայրիկը գինին լեցուց, մայրիկն ալ գաւաթը բարձրացուց, ու չորս կողմը նայել ետքը ապահով ըլլալով որ մէկը զիրենք չի լսեր, զուարթօրէն ըսաւ.

— «Երեսնիդ տեսնանք, մէկտեղ ծերանաք. աս գործը մասրաւարդ, քաղաքաւարդ սանկ խօսք-մէկ գլուխ հանելիս՝ բէք աղւոր փախաւ... »

Սեղանին տակ լալաւոր
ԲԻՍԻԿԸ

ԳՈՂՈՒԹԵԱՆ ՀՐԱՇԱԿԵՐՏԸ

Օթէջլ գիւղը սքանչելի վիշապ մը կը բնակիմ. բաւական ընդարձակ պարտէզով և քիչ անցուդարձով փողոց մը: Յունիսի տաք օր մը ջութակ կ'ածէի, երբ յանկարծ դուռը զարնուելով՝ բոլորովին անծանօթ մէկը ներս մտաւ: Յիսուննոց անձ մը կ'երևէր, հասակաւ կարճ, բայց պնդակաղմ, հագուստը մաքուր՝ բայց շատ տեղ չը կոճկուած: Առանց որ և է քաղաքավարական ձևերու, գնաց բազմոցին վրայ նստաւ: Ես բաւական վրդովեցայ: Փեղոյրը հանելով գլուխը բացաւ, քիչ շատ ճերմկցած պատկառելի գլուխ մը՝ որ յարգանք կ'ազդէր:

— Կը ներէք, պարոն, ըսաւ, վշտագին ձայնով, եթէ առանց ո'վ ըլլալս իմացնելու եկած եմ. բայց ես ձեր դրացին ըլլալուս համար ձեռնութիւն առի: Կը պաշտեմ երաժշտութիւնը. լսեցի որ ջութակ կ'ածէք, և բուն բաղձանք մը զգացի ձեզ ծանօթանալու:

— Արտաոց մէկն է, ըսի իւրովի:

— Ձեր ջութակը, յարեց, սքանչելի ձայն ունի, և դուք ալ մեծ տաղանդով կը նուագէք:

Ո'վ սնափառութիւն, այս ֆօնրայիսնէն շատ ախորժեցայ, և ոտարականին համար ըզգացած կասկածս իսկոյն փարատեցաւ:

— Արդարեւ, ըսի, ջութակս սքանչելի է, իտալական հին ջութակ մ'է, բուն Ամաթի մը:

Անծանօթը ջութակը ձեռքէս առնելով՝ չորս կողմը դարձուց և քննեց:

— Այո՛, ըսաւ, ջութակներուն լաւագոյնըն է, առ նուագն 3,000 ֆրանք կ'արժէ:

Իմ բոլոր շնորհաւորութիւններս, պարոն, կը տեսնեմ որ քաջ արուեստագէտ մ'էք:

Ու ջութակը ձեռքս տուաւ:

— Սխալ լսեք էք, պարոն, ընդհակառակը շատ տկար եմ, ըսի:

— Ձեմ գիտեմ եթէ տկար էք կամ զօրեղ, միայն գիտեմ որ լաւ կը զգաք, արհեստին մէջ ամեն բան ան է: Կ'աղաչեմ որ շարունակէք այն կտորը:

Ասանիոն սկսայ, բոլոր հոգւովս կը նուագէի: Երբ կտորը լմցաւ, տեսայ որ անծանօթը՝ սենեկին մէջ գտնուած բոլոր առարկաներն ուշի ուշով աչքէ կ'անցնէր:

— Ի՞նչ գեղեցիկ կտոր, ըսաւ, և ի՞նչպէս լաւ երևան հանեցիք վարպետին բոլոր միաբը: Հաստ շնորհակալ եմ, կը ներէք: Եթէ առանց

որ և է քաղաքավարական ձևերու ձեր տունն եկայ: Քիչ մը այլանդակ պիտի երևիմ ձեզի բայց եթէ գիտնայիք թէ ի՞նչ վիշտեր կրած եմ: Անծանօթն երկու ձեռքովը գլուխը բռնեց: — Կին մ'ունէի զոր կը պաշտէի, և սոսկ կալի պարագաներու մէջ կորուսի: Երկար առտն խենդ էի —:

Առջին զգացած երկիւղս քարձեալ եկաւ: Դիտեցի որ անծանօթն անսովոր նայուածք մ'ունէր:

— Հիմա բժշկուած եմ, յարեց, կ'աշխատեմ հին վիշտերս երաժշտութեամբ մոռնալ: Ձեզի շատ համակրեցայ և կուզեմ գլխէս անցածները ձեզի պատմել: Սոսկալի գաղտնիք մ'է սա, զոր ձեզի կը փստահիմ:

— Պարոն, ըսի, չեմ ուզեր որ դառն յիշատակներ արթնցնէք:

— Հոգ չէ, ասով քիչ մը կը մխիթարուիմ: Քսաներկու տարեկան էի, աղէկ անուան մը և կրորիկ հորստութեան մ'ալ տէր: Այն ատեններն էր որ Բարիդի շրջակաները բուսածիւնի վաղեմի ընտանիքներէն Օֆրովիլ ընտանեաց մէջ ընդունուեցայ: Օֆրովիլ մարքիզն երկու հրաշագեղ աղջիկ ունէր, Զօէ և Տընիզ, Անոնց գեղեցիկութենէն հրապուրուած, սկսայ ստեպ յաճախել և տան բարեկամն եղայ, երկու բոլորն ալ կը սիրէի, եւ շատ չանցաւ տեսայ որ երկուքն ալ զիս կը սիրեն: Կացութիւնս ծանր էր: Այցելութիւններս աւելի շատցան, իմ եւ աղջկանց մտերմութիւնըն երթալով աւելցաւ, երկար ատեն վարանելէ, մտածելէ վերջը՝ կրասեր աղջիկը՝ Տընիզը՝ կնութեան ուղեցի:

«Անկարելի էր նկարագրել Զօէի զգացած վիշտը, բայց կ'աշխատեմ ծածկել, եւ խորատելութիւն մը կը տածէր բոլոր դէմ: Հարսնիքը շքեղ կերպիւ կատարուեցաւ: Զօէ կը ջանար անտարբեր երևիլ, սակայն իր գունատ դէմքն սրտին վիշտը կը մատնէր: Ամուսնանալէս վերջը կնոջս հետ Իտալիա մեկնեցայ: Կենացս ամենէն երջանիկ ժամերը հոն անցուցի: Վեց ամիս վերջը աներոջս տունը դարձանք: Զօէ սիրալիր ընդունելութիւն մը ըրաւ. կարծեցի թէ մոռցած է և անհոգ եղայ: Հաստ չանցաւ Տընիզի առողջութիւնը խանգարեցաւ ու բնաւորութիւնը փոխուեցաւ: Այն հեղահամայն կինը, ջղուա, կիրքոտ, դիւրագրգիռ կինը մը եղաւ: Ընտանեաց ծեր բժիշկ մը ամէն օր կ'այցելէր: Երբեմն աչքերը վրաս սեւեռելով՝ այլանդակ հարցումս

ներ կ'ուղղէր ինծի: Ես կարեւորութիւն չէի տար. կը կարծէի թէ իր ծեր տարիքին բերձամբ կը զտուանցէր: Տընիդի վիճակը ծանրանալով՝ անկողին ինկաւ. քոյրը մեծ անձնուէրութիւն մը ցուցուց, եւ ալ բովէն չբաժնուեցաւ: Յուսահատած էի:

Իրիկուն մը, այն ինչ Զօէ սենեակէն դուրս ելած էր, Տընիդ ձեռքս բռնելով. — Կալէթան, ըսաւ, կորսուած եմ: Ես սկսայ լալ. — Ա՛հ, եթէ գիտնաս, թէ ես թունաւորուած կը մեռնիմ, եւ թունաւորողն ալ քոյրս է:

— Անկարելի՛ է, գոչեցի. կը զա՛ւանցե՛ս: — Երէկ գիշեր, կարծելով թէ բնացած եմ, տեսայ որ թոյնը կը լեցնէր:

Ի՛նչ սոսկալի վիճակ:

— Կը նախանձի իմ բաղդիս, եւ կ'ուզէ կինդ ըլլալ: Երգում ըրէ որ հետը չը պիտի կարգուիս —: Պաշտեցի կինս վիզս փաթթուեցաւ: Իսկոյն երգում ըրի. . . շատ չանցաւ հոգին աւանդեց:

Անծանօթն հոս լռեց: Ես շահագրգռուած էի:

— Աւելորդ է նկարագրել զգացած ցաւս: Երբ Զօէ ներս մտաւ, վիզէն բռնելով անկողնին քով բաշեցի մեռեալին հետ դէմ առ դէմ բերելու համար:

— Թշուառական աղջիկ, վատշուէ՛ր, գոչեցի, տես ի՛նչ ըրիր, ամէն բան գիտեմ: — Ոտքերուս իյնալով՝ իր ոճիրը խոստովանեցաւ: — Քեզի, ըսի, ոստիկանութեան չպիտի յանձնեմ, չեմ ուզեր ընտանեացի եւ իմ պատիւս արատել. ծնողքդ կարելի է ամօթահար մեռնին, բայց իսկոյն պիտի անհետիս, երբէք քեզ չպիտի տեսնեմ, թէ ոչ... — Պիտի անհետիմ, պատասխանեց, պիտի անհետիմ, իսպառ: — Հետեւեալ օրն անկողին մէջ մեռած գտնուեցաւ: Ինքզինքը թունաւորած էր: Երկու քոյրերն իրենց բոլոր ինչքերն ինծի թողած էին:

Անծանօթը դարձեալ լռեց, հետաքրքրութիւնս աւելի շարժած էր եւ պատմութիւնն ալ սրտիս շատ ազգած էր: Վայրկեան մը լռելէ վերջը շարունակեց.

— Կը յուսայի որ ամէն բան լինցած է: Զօէ մեռած էր, գաղտնիքը միայն ես գիտէի: Ծերունի Տօթթօրը բոլորովին մաքէս ելած էր: Գերեզմանատունէն վերագործին՝ բովս մօտեանալով ուսիս զարկաւ:

— Պարոն կոմս, ըսաւ, իմ շնորհաւորութիւններս, կը տեսնեմ որ շատ վարպետօրէն գիտէք թոյն գործածել:

— Ի՛նչ ըսել կ'ուզէք, պարոն, հարցուցի:

— Կ'ուզեմ ըսել թէ ձեր դատը բաւական աղմուկ պիտի հանէ: Կնոջդ մեռած ատեն քիչ մը կ'ուսկած ունէի, այսօր ապահով տպացոյցներ ունիմ: Քեներդ թունաւորելու համար գործածուած դեղին սրուակը պահած եմ, պարունակութիւնը տարրալուծեցի:

— Ի՛նչ, կ'ամբաստանէ՞ք զիս, գոչեցի, ես թունաւորեմ իմ կինս՝ զոր կը պաշտէի հսգւով, եւ ի՛նչ նպատակաւ:

Տօթթօրը ճիւղալային ժպիտ մը հանեց:

— Միթէ այս ոճիրը քեզի չը նպաստեց. երկու զոհերուն ամբողջ ինչքը ժողանգեցիր: Բայց այս խնդիրն ինծի չը վերաբերիր, դնա՛ գնա, դատաւորներուն հետ կարգադրէ:

Ափի բերան, ապշած մնացած էի:

Ես կը վախէի որ գայթակղութիւն մը չեղներ ընտանեաց պատուոյն համար. արդ՝ ոչ միայն այս գայթակղութիւն երեւան կուգար, այլ նաեւ ամէնէն սոսկալի ոճիրով մը ամբաստանուած էի, եւ բոլոր երեւոյթներն ալ ինծի դէմ էին: Խենդենալը բան մը չէր:

Անծանօթն ինձ դառնալով հարցուց.

— Ի՛նչ կ'ընէիք դուք, եթէ իմ տեղս ըլլայիք:

— Բայց, թոթովեցի, զարմացած, չեմ գիտեր:

— Ես չը շփոթեցայ, խոստովանեցայ ոճիրը: Յատակագիծս պատրաստեցի:

— Տօթթօր, ըսի, ես մեծ ոճրագործ մ'եմ — չեմ ուզեր որ իմ ոճիրովս երկու պատուաւոր ընտանիքներ անուանարկ ըլլան, ինքզինքս պիտի սպաննեմ: Շատ աղէկ, ըսաւ Տօթթօրը. կը տեսնեմ որ դեռ ազնիւ զգացմունքներդ մեռած չեն, այս պայմանաւ կը լռեմ: Աղաչեցի որ գործքերս կարգադրելու համար պէտք եղած ժամանակը տայ ինծի. յանձն առաւ, պայմանաւ որ ընկերանայ: Թակարդ մը լարած էի իրեն, անձամբ մէջը կը նետուէր:

Աներոջս և ընտանիքէն բաժնուելով՝ երկուքս ալ մեկնեցանք Սէն — է Ուազի մօտերը՝ ունեցած մէկ ապարանքս երթալու համար: Հարկ էր շոգեկառքէն իջնել պղտի կայարան մը ուր գիշերայն պիտի հասնէինք: Յատակագիծս պատրաստած էի: Երբ շոգեկառքն ընթացքը մեղմացուց, յանկարծ դռնակը բացի եւ Տօթթօրը, որ կը մրափէր, ծամբուն վրայ նետեցի: Ի՛նչ որ մտքէս կան-

ցընէր, կատարուեցաւ: Մարմինը անիւներուն տակ գլորեցաւ: Շոգեկառքը կեցաւ. օգնութիւն պոռացի. Տօթթօրին մարմինը ջարդ ու բուրդ եղած էր:

Ազատուած էի: Ըսի թէ Տօթթօրը շոգեկառքին կենալէն տուջ ուզած էր ցատկել. ամէն մարդ հաւատաց և ո՛ր և է հետեւութիւն մը չունեցաւ:

Անծանօթը լուեց:

Ես անհանգիստ էի:

Ճակատը սրբելով շարունակեց:

— Այնչափ յուզմունքներով՝ գլուխս տեղէն խախտած էր. խնդեցայ, կապուելու խնդ եղայ, պարոն:

Եւ ոտք ելաւ:

— Իմ գաղտնիքս իմացար, ըսաւ խոռոժ ձայնով:

— Ձեր գաղտնիքն ես չունեցի իմանալ, դուք պատմեցիք. վերջապէս ա՛լ ձանձրացայ:

— Մեզմէ մէկն աւելորդ է հոս, գոչեց սպառնալից:

* *

Դաշնակին ետեւը պահուրտեցայ. տարակոյս չկար. խնդ մը կատաղի խնդ մ'էր դիմացինս:

— Հիմա պատուհանէն վար պիտի նետեմ բեզ, պոռաց:

Փողոցին վրայ նայող պատուհանին վարագոյրները շարժեց, խնդն դուռը զարնուեցաւ. վազելով դացի բանալու: Լաւ հոգուած, աւծիւում Պարոն մը ներկայացաւ: Պատուոյ Լէգէոնի վարդանշանը կը կրէր. ետեւէն ալ երկու յաղթանգամ մարդիկ կուգային բազէններ պղնձ հագած:

— Տօթթօր Մաքս ֆէսդաուն, ըսաւ օտարականի թեթեւ հնչումով, յիմարանցի մը տնօրէնն եմ: Հիւանդներէս մին այսօր փախած էր, և դէս ու դէն առած տեղեկութիւններէս կը գուշակեմ որ հոս ձեր վիպաշին մէջ ապստանած է:

— Սխալած չէք, հոս է, յարմար տանին կը հասնիք:

— Փառք Աստուծոյ: Մարթինի կոմսն է նա, տարաբաղդ մը՝ որ իր սիրած կնոջ մահուանէն խելքը կորուսած է, և ինք անանկ կը կարծէ թէ կինը թունաւորուած է:

— Ձիս պատուհանէն վար նետել կ'ուզէ:

— Իր խենդութեան մէկ նշանն ալ աս է:

Անհոգ եղիք, կ'առնենք կը տանինք զայն, և ներում կը խնդրեմ որ ձեզ անհանգիստ ըրինք:

Հետը բերած երկու մարդերը ցուցուց:

— Ասոնք, ըսաւ, յիմարանցին պահապաններն են:

Սրահը մտանք, խնդր շատ կատղած կերեկը:

— Նոպան (նեոպէթ)ը կը մօտենայ, ըսաւ Տօթթօրը:

— Տօթթօր, գոչեց խնդը, այս մարդը կ'ուզէ զիս մատնել յիմարանոց. պէտք է որ մեռնի:

Արաս ցատկեց. երկու օգնականները մեծ դժուարութեամբ հազիւ կրցան զայն բռնել: Մին բազէնին տակէն չուան մը հանեց:

— Ձեր ներկայութիւնը զայն աւելի կը գրգռէ, ըսաւ, կրնա՞ք վայրկեան մը պահուիլ մինչև որ առնենք տանինք:

Իմ ուզածս ալ աս էր: Իսկոյն պատին մէջ բացուած դարանի մը դուռը բացի:

— Արնամ, ըսի, հոս պահուիլ:

— Ո՛հ, պարոն, ո՛րչափ բարի էք: Կոմսին ընտանիքը երբէք չպիտի մոռնայ ձեր բարիքը, պիտի գայ անձամբ ձեր ներողամտութիւնը խնդրել, յարեց տօթթօրը՝ զին դարակին մէջ հրելով որուն գուռն ալ վրայէս կղպեց:

Ես ներսէն կոռուելու ազմուկ մը միայն կը լսէի:

— Հանդարտեցէք, պարոն կոմս, կ'ըսէր տօթթօրը, և կահկարասեաց տեղափոխութեան դօրին մը լսուեցաւ:

Յանկարծ կ'երևի թէ խնդը փախած էր, պառկելու սենեկէս ալ աղմուկ մը լսեցի, ապա խոր լուութիւն մը տիրեց: Տօթթօրն աճապարանօք դարակին դուռը բանալու մոռցած էր:

Մինչև իրիկուն փակուած մնացի հոն: Դռնապանուհին, որ տանս պէտքերն ալ կը տեսնէ, ի դուռ ասդին անդին փնտռելէ վերջըն եկաւ ցիս դուռս հանեց:

— Խնդը ի՞նչ եղաւ, հարցուցի:

— Ո՛ր խնդը:

Միայն այն միջոցին աչքիս զարկաւ որ բոլոր կահկարասիքը տակնուվրայ եղած էր. ջուլթակս, պղնձէ թանկագին արձաններս ու մեծարժէք պատկերներս աներևոյթ եղած էին: Աչքովս փնտռեցի Լուի Ժէ-ի ռժով ֆօն-ՍՕՂը: Հետքն անգամ չկար: Պառկելու սենեակս վաղցի, գրասեղանս ալ կոտորուած բացուած էր:

Ճիշ մը արձակեցի, դեռ նոր կը հասկնայի: Տունը թալլուած էր, ու ես կողոպտուած էի:

ԷՕԺԷՆ ՓՈՒՐԻԷ

Օ Կ Ն Ո Ւ Թ Ի Ն ՀԱՅ ՈՐՐՈՒԿՆԵՐՈՒՆ



Ի նպատակ Հայ Որրուկ-ներուն ԲԱԶՄԱՎԵՊ բացառիկ պրակ մը կը հրատարակէ: Թերթին երկայնութիւնն է 42 հարիւրորդամագր ու լայնք 30 հարմ: Թերթը կը բաղկանայ 40 էջերէ և ամէն էջ երեք լայն սիւնակներու բաժնուած է: Թուղթը հաստ, ողորկ, փայլուն և ընտիր: Կը պարունակէ ժողովրդեան ուշագրաւ, հետաքրքրական և օգտակար յօդուածներ: Բազմաժպիտ այս բացառիկ լայնածաւալ մեծ թերթը կը հրատարակուի իբրեւ անդրանիկ «Հայ պատկերազարդ թերթ»-ը, նման Եւրոպական մեծ ազգաց շաբաթական պատկերազարդ թերթերու: Կը տպուի մի քանի հազար և ստակը պիտի յատկացուի Հայ որբանոցներուն: Գինն է ԿԱՆԽԻԿ 2,50 Փր. 1րբ. 50 սէնթ: Այս ծանուցագրով կը հրաւիրենք մերազնեայ այն ամէն ազնիւ ու գթած անձ, նաւորութիւնները որ բաժանորդագրուելով այս բացառիկ պրակին, համեստ լուծայ մը բարեհաճին ձգելու Հայ որբուկներու գանձանակին մէջ: Բաժանորդագրաց անունն, և ով որ այս նպատակաւ որբուկներուն օգնութեան պիտի հասնի, հաւաքուած գումարը և որչափ պիտի յատկացուի իւրաքանչիւր որբանոցներու, պիտի տպուին Բազմաժպիտ պըրակներուն մէջ:

Այս բացառիկ թերթին մէջ կը տպուին նաև ծանուցումներ, մէկ տողի գինն է 25 սանդիմ. փափաքողք փութան յղել իրենց ծանուցումները:

Մեր հասցէն է՝

Rédaction de la Revue "Pazmaveb"

(St. Lazare)

VENISE (Italie)

Մ. 2.

Հ Ո Վ Ա Ս Ո Ւ Ն

Սիրուն բանաստեղծութեանց հատորիկ մըն է, ընթերցանութեան արժանի, որ կրնայ կաղանդի առթիւ ալ իբր նուէր տրուիլ: Գինն է 25 սանդիմ. շատ առնողներու համար չափաւոր գեղջիկ մեղք ջարպհանէլեան գրատուն Վառնա:

ՖՐԱՆՍԵՐԷՆԻ ԴԱՍ

Սոյն տիեզերական ընդուի հմտութիւնը գրեթէ անհրաժեշտ է ամէն ազգի անհատներու, անոր օգտակարութիւնը հաշակելը աւելորդ է: Դիւրուսոյց մէթոտ, ժամը 90 սանթիմ: Առաջին դասը ձրի է: Դիմել Արամ Մասեհեանի:

Ով որ կը փափագի ունենալ արտասահմանի մէջ հրատարակուած թերթերու հաւաքածոներ, թող գիմէ Վառնա Ջարպհանէլեան գրատունը, ուր կը գտնուին նաեւ 1900ի ամեն տեսակ օրացոյցներ: Պուլկարերէնը սովորեցնող գիրք մըն ալ կը ծախուի գին 7 ուկէս շրուշ:

ՓԱՓԱՃԱՆԿՆԵՐՈՒՆ

Յատկապէս խնամօք պատրաստուած ընտիր երչիկ եւ ապուխտ. կը ծախուի Վառնա Մուսալլա, Տ. Ռափայէլ Գարագաշեանի նպարեղինաց վաճառատունը: Գին գոհացուցիչ: Քաղաքներէ ու արտասահմանէ եկած յանձնարարութիւնը ալ փութով կը կատարուին:

ОТГОВОРНИКЪ М. СКОНОВЪ
Печатница „Взаимность“ — Варна.